# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

19/06/2020

## ՈՐՈՇՈՒՄ N 49-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐՁՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Բարձրավան գյուղի բնակիչ Էդիկ Լազրի Հովհաննիսյանի դիմում-խնդրանքը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Բարձրավան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, Էդիկ Լազրի Հովհաննիսյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերից 0.5 հեկտար վարելահողը (կադաստրային ծածկագիր՝ 09-021-0104-0046) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ <<հասարակական կառուցապատման>> գործառնական նշանակությամբ, հանգստի գոտի հիմնելու նպատակով:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ԼԱՉԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՈՍԿԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2020թ. հունվարի «22»
ք.Գորիս